Ի ՏԱՐԱՇԽԱՐՀԻԿ ՄԱՀ ՎԵՀԱՓԱՌ ԻՇԽԱՆԻ

ՅԱԿՈԲԱՅ ԶԻԼԻՊԻՈՅ ՏԻԻԶ.

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ՏԵՍԷ՞Ք արդեօք ըզդիւցազնիս ասպընջական վեհ ոգին ,
Որ գաղթական եւ մեր յափանց լաւագունին 'ի խընդիր ,
Եւ ուղեկցացըն գրաւական թողեալ անդէն զիւր մարմին ,
Անժոյժ ոգւով թըռեաւ յեթերս , անտի դիտել զայս երկիր ։
Ըզհիւրդ 'ի քէն , Իտալիա , 'ի քէն ուժգին պահանջեմ.
Ո՜ ազգ մեր ողջոյն որք կացուցեր 'ի հանճարոյն գերունակ ·
Պարծիր հայեաց , թէ ոչ գելուն և քո աղիքդ ո՜ դըժխեմ.
Սա չէր դայեակ լոկ իմաստից , այլ շուք ազգիս և պըսակ ։
Եւ դու ո՜վ մահ անագորոյն , զիա՛րդ ծածուկ ուղեկից
Դու քայլ առ քայլ գնացեալ ըզհետ կացեր առ դուրս դարպասին [1] ·
Անտի սլացեալ դարանեցար թափել ըզթոյն քոյ ըզձիգ ,
Կըտրեալ ըզթել յաւէժ կենաց , ո՜հ , այն անմահ Մեհազին ։
Անիծեալ մարդ որ ոչ այսօր լացցէ , ոգէր Մարգարէն ·
Ըզդոյն գոգցես նոյն իսկ բնութիւն օրինադրէ համազգեաց ,
Ոչ արտասուեաց , այլ զարմանաց մեզ ողբս առնուլ համօրէն ,
Միոյն մահուամբ իբր արամեան տունս 'ի շըքոյն պակասեաց ։
Հասարակաց ճըգներ բարւոյ վեհանձն Ոգին հանապազ ·
Ի փորձ սիրոյն ձոխք և անկածք վայելէին անխըտիր ·
Սա միայնակ զայսքան կեցեալ ամս 'ի յերկրի անքամբաս ·
Շա՛տ դարք 'ի սա , ո՜հ , ողբասցեն զանգիւտ հանճարն երկնաձիր ։
Համատարած արփւոյն 'ի տիպ գըգուեր թևօքն հայրաբար ,
Տեսիլ դիմաց խեռից պատկառ և պարկեշտից քաջալեր ,
Փըղփիտ աչացն՝ ոչ սաստ յոնիցն երբէք դառնայր վայրապար ,
Հուժկու ձեռամբ զընդդիմակաց զալիս բաղդին թաւալեր ։
Այդքան բարեաց երկիր փոխան երեքկանգնեան քեզ չիրիմ
Եհատ սահման , հողն որ սընոյց նոյն և ըզքեզ ամփոփէ ։
Ընդ արշալոյս կենացդ ընդ քեզ պայքարեր բաղդն ոխերիմ ·
Ըզքեզ , ո՜վ Մեհդ , ըզքեզ ողբամք արև ցորչափ ծագեսցէ ։
Դու զտուն նախնեացդ որ խարխալէր չար յարկածից հինօլին
Յերկինս 'ի վեր 'ի հիացումն ուղղեալ շըքեղ կանգնեցեր ·
Քոյին ձըգանցդ են արգասիք անդորրութիւն մեր ազգին ,
Քո յիշատակ ոչ մոռասցի դրոշմեալ անջինջ 'ի սիրտ մեր ։
Քան ըզԽորնոյ ծերն ողբասցուք , մերոց աւա՜ղ զըրկանաց ·
Ո՞ւր վերջացան իղձք և խորհուրդք , անյագ սրտից ըսփոփանք ·
Մինչ յուսայաք 'ի խրախ դարձին զերգըս պարել հըրճուանաց ,
Ահա փոխան երկինք երկիր մեզ ողբակցին 'ի մեր վտանգ ։
Դժնեայ արկածք որչափ քամեն 'ի մեր աչաց արտասուք ,
Յորչափ երկիր երկնէ չարիս որդւոց մարդկան և երկին ,
Նըւիրական Շիրմիդ լիցի քոյ յորդեկայ յաւէժ սուգ ,
Կաթիլք յամպոց լացցեն ըզքեզ՝ աստեղք մինչև թօթափին ։

Հ · Մ · Ա · (Երգեալ 'ի Բիւզանդիոն 'ի 8 օգոստ ։)

1 Վանացն , ուր եհաս յ13 (1) յունիսի · մեկնեցաւ 'ի Պատաւիոն 'ի 1 յուլիսի (19 յունիսի) , և անտի յետ աւուրց յԱպանոյ · իսկ 'ի 16 (4) յուլիսի ուղևորեալ 'ի Վիչենցա վախճանեցաւ անդ 'ի նմին երեկոյի ։